

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գալստյան Ա. (ՀՊՄՀ, Հայաստան)

ash.galstyan@mail.ru

Բանալի բառեր՝ գեղարվեստական վավերագրություն, հեղինակ-պատմող, կառուցվածք, մեթոդ, գրույց, նկարագրություն:

Գեղարվեստական վավերագրության տեսակները (հուշագրություն, ուղեգրություն, օրագրություն և այլն) երևան են եկել ամենաառաջին ժամանակներից պատմական հիշատակարանների տեսքով:

Ինչպե՞ս է արևելահայ գեղարվեստական վավերագրությունը հյուսվել 19-րդ դարից մինչև մեր օրերը, ի՞նչ միջոցներով են իրականացել հուշագրության, ուղեգրության, օրագրության ոճային առանձնահատկությունները, և վերջապես հայ բանասիրական ժառանգության այդ տեսակը այսօր ինչպե՞ս է զարգանում և ի՞նչ հիմնախնդիրներ ունի լուծելու:

Հուշագրությունը, ի տարբերություն գեղարվեստական գրականության, ժամանակակիցների կողմից անցյալի հետաքրքրություններ կայացնող դեպքերի ու դեմքերի մասին հիշողության գրառումն է: Ընտիր հուշագրություն է ժառանգված հայ մեծերից:

Ղազարոս Աղայանը, Պերճ Պռոշյանը, Շիրվանզադեն շարունակեցին արևելահայ գեղարվեստական վավերագրության ուղին՝ իրենց հուշագրական երկերում ներկայացնելով նաև ժամանակի ամբողջական պատկերը: Հետագա տարիներին Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Ստեփան Զորյանը, Գուրգեն Մահարին և ուրշներ արվեստագետի նուրբ գրչով

ընդլայնեցին ժանրի սահմանները՝ հանդես գալով իբրև ականատես-վկաներ:

Ուղեգրությունը գրողի ճամփորդության ընթացքում ստացած անմիջական տպավորության գրառումն է, որտեղ հեղինակի նպատակն է ընթերցողին ծանոթացնել, պատմել ուղևորության ընթացքում տեսածն ու լսածը, ներկայացնել հանդիպած մարդկանց կյանքն ու կենցաղը: Սիլվա Կապուտիկյանի ուղեգրությունների քառապատումը պատմում է սփյուռքի ու սփյուռքահայերի խնդիրների և ձեռքբերումների մասին: Ուղեգրության զարգացման առումով գրավիչ է Զորի Բալայանի «...Զիմ Կիլիկիա» ուղեգրությունը:

Օրագրության մեջ հեղինակի կյանքի (նաև հոգևոր կանքի) մանրամասն նկարագրությունն է՝ վավերական պատմություններով: Արևելահայ օրագրության փայլուն նմուշներ են Ավետիք Իսահակյանի «Հիշատակարանը», Լեո Կամսարի «Սոցիալիզմի սահարա» օրագրությունը, Կարպիս Սուրենյանի «Օրագիր. 1943-2001» երկհատորյակը:

Նշելի է, որ մեր օրյա գեղարվեստական վավերագրությունը զարգանում է դիպուկ ասույթներով և բնութագրիչներով: Տարբեր մակարդակներում գրույցների վերաքաղություններն ունեն բանասիրական-աղբյուրագիտական արժեք: Շատ հատվածներ աչքի են ընկնում իմացաբանական հիմքերով: Այստեղ շատ ուսանելի բան կա գրողի՝ մարդուն ճանաչելու, ուսումնասիրելու մեթոդի մեջ:

Մեր նպատակն է քննել գեղարվեստական վավերագրության տեսակների զարգացման տարբեր մակարդակները, վեր հանել արդի հիմնախնդիրները: Ուսումնասիրության արդյունքները կարող են ամբողջացնել հայերենի ոճական մակարդակի գիտական նկարագրությունը, որով էլ կարևորվում է թեմայի արդիականությունը:

CONTEMPORARY PROBLEMS OF DEVELOPMENT IN FICTION DOCUMENTARY

Galstyan A. (Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Armenia)